ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ IV ԴԱՐԻ ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Ռ. Ի. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

IV դարը Արշակունյաց Հայաստանի պատմության ամենահետաքրքիր և բախտորոշ իրադարձություններով լի մի շրջան է։ Դարի կեսերից բարդացել էր երկրի միջազգային դրությունը և օրակարգի հարց էր դարձել պայքարը անկախության պահպանության համար։ Այդ պայքարում ի հայտ եկան հայ պետական և ռազմական գործիչներ, որոնք կարողացան տասնամյակներ շարունակ դիմադրել երկու աշխարհակալ տերությունների՝ Բյուզանդիայի և Սասանյան Իրանի ագրեսիային։ Այդ պայքարը հաջորդաբար գլխավորել են Արշակ II և Պապ թագավորները, սպարապետներ Վասակ, Մուշեղ և Մանվել Մամիկոնյանները։

Սպարապետները IV դարում եղել են Հայաստանի բանակի հրամանատարներ և Արշակունյաց գահի հուսալի հենարանը։ Սակայն IV դարի սպարապետների մասին մինչև այժմ էլ խոսվում է ընդհանուր բնույթի մենագրություններում, այնինչ նրանց գործունեությունը արժանի է մանրազնին հատուկ քննության։

Համեմատաբար վերջերս (1968) լույս տեսավ առաջին աշխատանքը՝ նվիրված Պապ թագավորի ժամանակակից սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին։ Հեղինակը՝ պատմաբան Հրանտ Արմենը, մի շարք մենագրություններում քննության է առել Արշակունյաց շրջանի քաղաքական պատմության, առանձին նշանավոր դեմքերի գործունեության հարցերը[1]։ Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին Հրանտ Արմենը նվիրել է հատուկ հոդված, ուր տրվում է Մուշեղի քաղաքական ծրագրի ու նպատակների, գործնական քայլերի գնահատականը, որը պահանջում է մասնագիտական քննություն։ Հակառակ դեպքում լռությունը կնշանակեր համաձայնություն հոդվածագրի եզրակացությունների հետ, որոնք մեր կարծիքով ընդունելի չեն։

Հոդվածի վերնագիրն է՝ «Մուշեղ Մամիկոնյան առաջին հայ դիկտատորը»[2]։ Վերնագիրը արդեն մատնանշում է, թե որ տեսանկյունից է մոտենում հեղինակը սպարապետ Մուշեղի քաղաքական գործունեությանը։

Մի ամբողջ տասնամյակ՝ 365—375 թթ., Հայաստանի սպարապետն էր Մուշեղ Մամիկոնյանը, որը մի քանի տարի իր հեղինակությունը պարտադրում էր հայ աշխարհին, գրում է Հրանտ Արմենը։ Նա եղավ Հայաստանի դիկտատորը, երիտասարդ անփորձ արքային (խոսքը Պապ թագավորի մասին է—Ռ. Մ.) իր բթամատի տակ պահելու և վարելու մտասևեռումով։ Բայց Պապ թագավորը «պողպատյա նկարագիրը պիտի ցուցաբերեր՝ Արշակունի իր արքայական իրավասությունները պահպանելու և պաշտպանելու»։

Այն, ինչ փորձում էր սպարապետը, աննախընթաց էր, շարունակում է հոդվածագիրը, իրենից առաջ հայ նախարարներից ոչ մեկը ձեռնամուխ

---

1 Հրանտ Արմենը ունի նաև ուսումնասիրություններ, նվիրված Արտաշեսյան և մարզպանական շրջանների պատմությանն ու մշակույթին։ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1, էջ 302—303։

2 Պատմական քննարկումներ. Բեյրութ, 1968, էջ 151—173։

չէր [illegible] օրինավոր թագավորին «խամաճիկի տեղ դրած» համարձակվելու երկիր կառավարել ըստ իր քաղաքական տեսակետի[3]։

Նախարարական ապստամբությունները արտասովոր բան չէին այդ շրջանում։ Օրինակ՝ Տրդատ III-ի դեմ ապստամբեց Սլկունի իշխանը, Խոսրով Կոտակի դեմ՝ Բակուրը, Արշակ II-ի դեմ՝ Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։ Բայց նրանք կամ պարսիկ թագավորի դրդումով էին ծառանում թե՞նց բնիկ թագավորի դեմ կամ անձնական դրդապատճառներով։ Նրանցից ոչ մեկը չէր ուզում Հայոց աշխարհի ղեկը վերցնել իր ձեռքը։ Մուշեղն էր, որ արավ այդ փորձը, գրում է Հրանտ Արմենը։

Մուշեղի գործունեությանը ծանոթանալու համար գլխավոր աղբյուր է Փավստոս Բուզանդի պատմությունը։ Այս աղբյուրը, սակայն, Հր. Արմենի կարծիքով, պետք է ենթարկել մանրազնին քննության, որովհետև նրա «ապշեցուցիչ» չափազանցությունները Մամիկոնյաններին գովաբանելիս հասնում են այնպիսի առասպելական չափերի, որ քննողը երբեմն ստիպված է լինում մերժել նույնիսկ հավաստի տեղեկությունները (153)։ Հակառակ Փավստոսի չափազանցությունների և կողմնակալ պատկերին, ուշադիր ուսումնասիրությունը առանց դժվարության կարող է գտնել Մուշեղի պետական գործունեության գլխավոր գծերը։ Ըստ Հրանտ Արմենի Մուշեղ Մամիկոնյանը քաղաքական ծրագիրը հետապնդում էր հետևյալ նպատակները.

1. Հայաստանը դարձնել Բյուզանդիայի վասալ երկիր, իսկ ինքը, որպես խնամակալ, դառնար երկրի անթագ թագավոր և բյուզանդական զորապետների աջակցությամբ վարեր պետական գործերը իր ցանկությամբ (158)։

2. Պարսկ թագավորը դեմ էր այդ ծրագրին և ձգտում էր մերձենալ Պարսկաստանի հետ։ Երկուսի միջև ծագել էին վեճեր, որոնց պատճառով անհրաժեշտ է եղել կաթողիկոսի միջամտությունը (159—164)։

3. Մուշեղը մասնակցել էր Պապի դեմ կազմակերպված դավադրությանը և սպանությանը (166—168)։

4. Նա կառուցում էր (կամ ծրագրում էր կառուցել) բերդեր, որպեսզի ուժեղացնի Բյուզանդիայի ազդեցությունը և այդ միջոցով ապահովի իր դիրքը (169—170)։

Որպեսզի ընդունենք կամ մերժենք այս կետերը, նախ պետք է ծանոթանանք հարցին վերաբերող Փավստոսի տեղեկությունների հետ։

Առաջին անգամ պատմիչը հիշատակում է սպարապետ Մուշեղին Արշակ II-ի սպանությանը հաջորդած դեպքերի կապակցությամբ։ Փառանձեմ թագուհին պաշարված էր Աբտադերս ամրոցում, երկիրը մնացել էր առանց կառավարչի և հայ ազատանին օգնություն խնդրեց հունաց թագավորից, Կ. Պոլիս մեկնեց պատվիրակություն Մուշեղի գլխավորությամբ, խնդրելու, որ Արշակի որդուն՝ Պապին, որը ապրում էր Կ. Պոլսում, ուղարկեն Հայաստան թագավորելու։ Կայսրը բավարարեց խնդրանքը և Պապը եկավ Հայաստան։ Նրա դալու առթիվ Մուշեղը կազմակերպեց հայկական զորքերի զորահանդես, իսկ Պապը շնորհակալություն հայտնեց նրան[4]։

Այնուհետև Փավստոսը հետաքրքիր մանրամասներ է հաղորդում թագավորի և սպարապետի փոխհարաբերությունների վերաբերյալ։

Պապի հրամանով Մուշեղը կազմում է հատուկ զորամաս երկրի սահմանները պաշտպանելու համար, կռիվներ են տեղի ունենում պարսից զորքի հետ և Մուշեղը ջարդում է թշնամուն (370 թ. Ատրպատականի ճակատամարտ), բայց նա ագատում է գերությունից շահի կանանոցը, որի պատճառով Պապը դժգոհում է սպարապետից։ Ներսես կաթողիկոսը ստիպված է լինում միջնորդել և բարեխոսել։

Հաջորդ ճակատամարտում (371 թ., Ձիրավի դաշտ) հայկական զորքը նորից սախջախում է պարսից բանակը, իսկ Շապուհի դաշնակից Աղվանից

---

3 Հրանտ Արմեն. նշվ. աշխ., էջ 151, 152։

4 Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի. Երևան, 1987, էջ 263, 285, 287։

թագավոր Ուռնայրը գերի է ընկնում։ Մուշեղը նրան ոչ միայն չի սպանում, այլև ազատ է արձակում, որովհետև նա արքայական տոհմից էր։ «Շնորհակալ եղիր, որ թագավոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում, ես թագավոր մարդու չեմ սպանի՝ մինչև անգամ եթե շատ նեղն էլ ընկնեմ», ասում է նա Ուռնայրին (291, 293, 299, 305)։

Այդ քայլի համար սպարապետին ամբաստանում են Պապի առջև, իբր նա սպասում է Պապի մահվանը, այդ պատճառով էլ թշնամիներին ազատ է արձակում։ Երկուսի միջև դժգոհություն է առաջ գալիս և Պապը հաճախ հանդիմանում է Մուշեղին։ Բայց այս անգամ էլ միջադեպը հարթվում է (305, 307)։

Այնուհետև Փավստոսը պատմում է, թե ինչպես հայոց սպարապետը միացնում է Արշակունյաց թագավորությունից անջատված ծայրամասային շրջանները և այլ երկրներ, որոնք ենթակա էին Արշակունիներին (320—326)։

Այս հատվածին հաջորդում է փոքր գլուխ, որը վերնագրված է. «Հայոց Մուշեղ սպարապետի մասին»։ Նրանում տրված է սպարապետի հետևյալ բնութագիրը. «Հայոց քաջ զորավար և սպարապետ (Մուշեղը) ամբողջ իր կյանքում լի էր նախանձախնդրությամբ. նա հավատարմությամբ և արդար աշխատանքով, միշտ ջանասիրությամբ աշխատում էր հայոց աշխարհի և թագավորության համար։ Գիշեր ու ցերեկ նա աշխատանքի մեջ էր. նա ճիգ էր թափում, պատերազմներ էր մղում, թույլ չէր տալիս, որ թեկուզ մի կորու չափ գետին Հայոց աշխարհի սահմաններից խլվի։ Նա կյանքը դրել էր աշխարհի վրա։ Մուշեղ զորավարը շարունակ արիական պատերազմներ էր վարում քաջության անվան համար, իր բնիկ տերերի, աշխարհի բնակիչների համար, քրիստոնեական հավատի, աստծուն հավատացող և Քրիստոսի անունով մկրտված ժողովրդի, եկեղեցիների, նրանց նվիրված սպասների, Քրիստոսի վկայարանների, աստծու ուխտի համար, քույրերի և եղբայրների, մերձավոր տոհմակիցների, մտերիմ բարեկամների համար։ Նա իր կյանքը դրել էր աշխարհի համար, իր կյանքին չէր խնայում, իր կյանքի բոլոր օրերում նա աշխատում էր իր բնիկ Արշակունի տերերի համար» (327)։

Առանձին գլուխ հատկացված է Ներսես կաթողիկոսի սպանությանը։

Պատմիչի հաղորդմամբ Պապը ամենևին չէր լսում Ներսեսին, հաճախ հակառակվում և թշնամանում էր, սպասում նրա մահվանը և ցանկանում էր նրան սպանել, բայց հունաց թագավորի և ժողովրդի ահից չէր համարձակվում նույնիսկ խոսքով անարգել։

Ի վերջո Պապը դավադրություն է կազմակերպում կաթողիկոսի դեմ, հրավիրում նրան խնջույքի իր սեփական ավան՝ Խախու, և այնտեղ խընջույքի ժամանակ թունավորում։ Խնջույքին ներկա էին Մուշեղը, հայր Մարդպետը և այլ մեծամեծներ։ Երբ թունավորված Ներսեսը մահանում է, նրա մարմինը տեղափոխում են Ներսեսի գյուղը՝ Թիլ ավանը։

Այսքանը Մուշեղի մասին հաղորդում է պատմագիրը Ներսեսի մահվան առնչությամբ (331—335)։

Այնուհետև Փավստոսը հաղորդում է, որ Պապ թագավորը իր «միտքը ծռեց և սիրտը շուռ տվեց» հունաց թագավորից և կամեցավ սեր և միաբանություն հաստատել պարսից թագավորի հետ։ Նա սկսեց իրեն թիկունք դարձնել պարսից թագավորին, իսկ հունաց թագավորից պահանջում է Կեսարիան, Ուռհա քաղաքը և այլ տասը քաղաքներ, որպես հին հայկական քաղաքներ։ «Թեպետ Մուշեղը, և Հայոց բոլոր իշխանները,—գրում է Փավստոսը,—շատ հորդորեցին թագավորին, որ հունաց թագավորության հետ իր ուխտը չխզի, նրանց չլսեց և հայտնի կերպով ցույց տվեց իր թշնամությունը հունաց թագավորի դեմ»։ Իսկ հունաց թագավորը գաղտնի դեսպան ուղարկեց Հայաստան և հրաման տվեց սպանել Պապին (353—357)։ Հունաց զորավար Տերենտը Պապին հրավիրեց խնջույքի, իբր պատիվ տալու համար, և դավադրաբար սպանեց թագավորին։

Սպանությունից հետո հայոց մեծամեծները հավաքվեցին միասին.

Մուշեղ սպարապետը, հայր Մարդպետը և մյուս իշխանները քննարկեցին իրենց վերաբերմունքը՝ պահանջե՞ն թագավորի վրեժը, թե ոչ։ Բայց ելնելով երկրի բարգ վիճակից և չցանկանալով վատացնել հարաբերությունները կայսեր հետ, որոշեցին լռել (357)։

Շուտով Կ. Պոլսից Հայաստան եկավ նոր թագավոր Վարազդատը, որը Արշակունիների տոհմից էր։

Այնուհետև Փավստոսը Մուշեղի մասին գրում է. «Իսկ Հայոց Մուշեղ սպարապետը առաջնորդում էր հայերին և զգուշությամբ պահպանում էր Հայաստանի սահմանները, ինչպես սովոր էր աշխարհը բարեկարգ պահել, և բարի խրատներ էր տալիս մանուկ Վարազդատ թագավորին։ Եվ միշտ հոգս էր քաշում Հայոց աշխարհի թագավորության համար, թե ինչպես շեն պահե, և միշտ բարեմտությամբ աշխատում էր, որ թագավորությունը հաստատ մնա։ Նա խորհրդակցում էր հունաց իշխանների հետ և նրանց միջոցով կայսեր հետ, թե հարկավոր է Հայոց աշխարհում քաղաքներ շինել ամեն մի դավառում, որտեղ մի-մի քաղաք, որտեղ երկու-երկու, ամուր պարիսպներով պատած, որպեսզի զորանիստ տեղեր դառնան բոլոր Հայոց աշխարհում, մինչև Դանձակ սահմանագլուխը, որը սահման էր Պարսկաստանի և Հայաստանի միջև։ (Նույնպես խորհուրդ էին անում) Հայոց բոլոր ազնվականներին զինավորել կայսերական ծախսով, այնպես էլ Հայոց աշխարհի զորքերը, որպեսզի այս կերպով ամեն զգուշություն ձեռք առնեն իրենց թշնամիների՝ պարսից զորքերի դեմ։ Եվ Հունաց թագավորը մեծ ուրախությամբ հանձն էր առնում այս բաները կատարել, որպեսզի այլ բոլոր միջոցներով աշխարհը հաստատ ու անշարժ կապվի իր հետ և Պարսից թագավորը չկարողանա Հայոց աշխարհը գրավել» (359)։

Բայց Բյուզանդիային հակադիր խմբավորումը կարողացավ իր ազդեցությանը ենթարկել նոր թագավորին։ Վերջինի դայակն ու ուսուցիչն էր Բատ Սահառունի իշխանը, որը պարսկասեր հոսանքի ազդեցիկ դեմքերից էր. նա համոզեց Վարազդատին, որ Մամիկոնյանները ի բնե Արշակունիների թշնամիներն են եղել և վարել են երկդիմի քաղաքականություն, որ Մուշեղը շար մարդ է, որպես ապացույց վկայակոչում է Ուռնայրի ազատումը։ Իբր նրա խորհրդով է սպանվել Պապ թագավորը, իրեն՝ Վարազդատին էլ կսպանի և կթագավորի։

Խորհուրդ են անում, թե ինչպես վարվել։ Ի վերջո կազմակերպում են դավադրություն, սպարապետը հրավիրվում է ընթրիքի, որի ժամանակ սպանվում է։ «Գնա Պապ թագավորի մոտ հարցրու և կիմանաս, թե ինչից է», ասում է Վարազդատը Մուշեղին, իսկ Բատ Սահառունին մահացու հարվածում է նրան (361—363)։

Ինչպես երևում է մեջ բերված տեղեկություններից, Փավստոս Բուզանդի մոտ ոչ մի խոսք չկա Մուշեղի դիկտատորական գործողությունների կամ իշխանությանը բռնի տիրանալու փորձի մասին։ Ընդհակառակը, պատմիչը նշում է նրա նվիրվածությունը Արշակունյաց թագավորությանը, հավատարիմ ծառայությունը նրա հանդեպ. պատմիչի խոսքերով ասած՝ «Իր կյանքի բոլոր օրերում նա աշխատում էր իր իսկական Արշակունի տերերի համար»։ Պատմիչը ընդգծում է Մուշեղի հայրենասիրությունը և ծառայությունը հայրենիքին։ Սակայն Հրանտ Արմենը նրան համարում է դիկտատոր։

Մեր կարծիքով նման տեսակետը, Մուշեղ Մամիկոնյանի գործողությունների այդպիսի մեկնաբանումն ու գնահատականը ոչ միայն ընդունելի չեն, այլև սկզբունքորեն սխալ են։

Դրա համար նախ պետք է ճշտել՝ ո՞րն է դիկտատուրայի էությունը, նրա բնորոշ գծերը։

Դիկտատուրան անսահմանափակ իշխանություն է, անձնական իշխանության վարչակարգ։ Դա պետական իշխանությունը վարելու, իրականացնելու հատուկ ձև է, որը հենվում է բռնի ուժի վրա։ Դիկտատորական քաղաքական վարչակարգի օրոք իշխանությունը կենտրոնանում է մեկ անձի ձեռ-

քում, առաջին պլան է մղվում բռնությունը, սահմանափակվում են կառավարման օրգանների իրավունքները։

Բռնակալի (դիկտատորի) ձեռքն է անցնում ամբողջ քաղաքական (վարչական), ռազմական, դատական իշխանությունը։ Ներքին և արտաքին քաղաքականության բոլոր կարևոր հարցերը որոշվում են նրա հայացքների և գործելակերպի համաձայն։

Դիկտատուրայի ժամանակ բոլոր խոշոր պաշտոնյաները (քաղաքացիական և զինվորական) նշանակվում են բռնակալի համաձայնությամբ. նույնիսկ հոգևոր դասի ներկայացուցիչները։ Պաշտոնատար անձինք դառնում են դիկտատորի կամակատարները։

Բայց արդյո՞ք այդպես էր վիճակը Հայաստանում Մուշեղ Մամիկոնյանի սպարապետության տարիներին։ Բոլորովին։

Փավստոս Բուզանդի տեղեկություններից չի երևում, թե Մուշեղը ձգտում էր Հայոց աշխարհի ղեկը վերցնել իր ձեռքը և դառնալ «անթագ թագավոր»։ Դրա համար պատմիչի մոտ պետք է լիներին վկայություններ այնպիսի գործողությունների մասին, որոնք վերը նշվեցին դիկտատուրան բնութագրելիս։

Ո՛չ վարչական և ո՛չ էլ դատական իշխանություն Մուշեղը չի ունեցել, նա ունեցել է միայն զինվորական բարձր պաշտոն՝ սպարապետություն, բայց դա Մամիկոնյան տոհմի ժառանգական արտոնությունն էր։ Ի դեպ, իր գործունեությունը, որպես սպարապետի, Մուշեղը ամբողջությամբ ծառայեցրել էր Արշակունյաց թագավորությանը (պետության) շահերի պաշտպանությանը (պայքար պարսից ագրեսիայի դեմ, անջատված մարզերի միացում հայրենիքին և այլ)։ Նա երբեք չի նշանակել որևէ բարձրաստիճան պաշտոնյա արքունիքում և ոչ էլ հոգևոր խավի ոլորտում (եպիսկոպոս, կաթողիկոս)։ Ոչ մի Արշակունի թագավոր (Պապ, Վարազդատ), չի եղել նրա հրամանների և ցանկությունների կամակատարը։ Հակառակը, եղել են դեպքեր, երբ թագավորը Մուշեղի նշանակած զինվորական պաշտոնյային ազատել է և փոխարենը նշանակել մեկ ուրիշին, իր ընտրությամբ։ Փավստոսը հայտնում է, որ հունաց Տերենտ զորավարը և Մուշեղը Դղակ մարդպետին նշանակեցին սահմանապահ Գանձակում, որը սահման էր Հայաստանի և Պարսկաստանի միջև (311)։ Ճիշտ է, Դղակը հետագայում դավաճանեց հայրենիքին և Պապը նրան մահապատժի ենթարկեց, փոխարենը նշանակելով ուրիշին՝ Գնել Անձևացուն (313, 315)։ Բայց տվյալ դեպքում խոսքը սահմանի պաշտպանության մասին է և սպարապետը կարող էր պաշտոնյա նշանակել, որովհետև այդ ծառայությունը ռազմական բնույթի էր։

Մուշեղի սպարապետության տարիներին գործում էր արքունիքը, նրա գործակալությունները (հազարապետությունը, մաղխազությունը և մյուսները), որոնց գործունեության մեջ նա չէր խառնվում։ Հայոց-մարդպետը մնում էր իր պաշտոնում, մի բան, որ անհնարին կլիներ սպարապետի (այն է՝ ռազմական) դիկտատուրայի պայմաններում։ Թագավորները (Պապն ու Վարազդատը) սպարապետի կամակատարներ չեն եղել, ինչպես դա պարզ երևվում է Փավստոսի տվյալներից։ Այդպիսի դիկտատուրա չի լինում։

Հատուկ պետք է նշել Արմենի սխալ գնահատականը ամրոցաշինության վերաբերյալ։

Ինչպես ասվեց, Մուշեղը ցանկանում էր յուրաքանչյուր գավառում պարսպապատ «քաղաքներ» կառուցել, ազնվականներին և հայոց զորքերը զինավորել կայսերական ծախսերով։ Այս ծրագիրը Արմենի կարծիքով նշանակում էր, որ սպարապետը ցանկանում էր Հայաստանը դարձնել Բյուզանդիայի վասալ երկիր։ Նախ, պետք է ճշտել, որ տվյալ դեպքում «քաղաք» բառը չունի իր սովորական իմաստը։ Տվյալ դեպքում այն նշանակում է պարսպապատ ամրացված տեղ, զորակայան։ Այդ է «քաղաքի» սկզբնական իմաստը՝

ᵓ Հմմտ. Փավստոս Բուզանդ, էջ 442, (ծան. 201)։ Այդպես է նաև ռուսերենում город բառի հին նշանակությունը (նույն տեղում, էջ 427, ծան. 59)։

Երկրորդ. պետք է նկատի ունենալ, որ այդ «քաղաք-կայաններում» բյուզանդական դորքերը չէին տեղավորվելու, ուստի այդպիսի կայանների կառուցումը բյուզանդական աղդեցության մտանգ չէր պարունակում։

Ճիշտ է. Մուշեղը իր ծրագրի իրականացումը կապում էր կայսեր լայն ոժանդակության հետ, նույնիսկ խորհրդակցում նրա հետ։ Բայց դրանում ոչ մի զարմանալի բան չկա, նա բյուզանդասեր խմբավորման պարագլուխն էր և Հայաստանի պաշտպանությունը պարսկական անվերջ ագրեսիայից ծրագրում էր իրականացնել կայսրության օգնությամբ։ Դա որոշակի քաղաքական դիծ է, այլ ոչ թե ձգտում երկիրը կախման մեջ դնելու մեծ տերությունից։ Իսկ թե որն էր տվյալ պահին ավելի ճիշտ Հայաստանի հոստը՝ պարսկասիրտկանը (որը պաշտպանում էր Պապը) թե կայսեբականը, դա վիճելի հարց է և այսօր դժվար է միանշանակ պատասխան տալ։

Բոլոր դեպքերում սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի քաղաքական գիծը, նրա գործնական քայլերը չեն նույնանում դիկտատուրայի հետ, այդպիսի նպատակ Մուշեղը երբեք չի ունեցել և սկզբնաղբյուրը (Փավստոս Բուզանդի «Պատմութիւնը») չի պարունակում որևէ տեղեկություն նման եղրակացության համար։ Ընդհակառակը, ըստ սկզբնաղբյուրի, Մուշեղը ջերմ հայրենասեր էր և նրա գործնական քայլերը բխում էին պետության շահերից։ Ըստ սկզբնաղբյուրի նրան իրավամբ կարելի է համարել IV դարի հայ ամենախոշոր պետական-ռազմական գործիչներից մեկը։

МУШЕГ МАМИКОНЯН—ВИДНЫЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ДЕЯТЕЛЬ АРМЕНИИ IV ВЕКА

Р. И. МАТЕВОСЯН

Резюме

Во второй половине IV в. Аршакидская Армения вела упорную борьбу за независимость против агрессии Византии и Сасанидского Ирана. Одним из крупнейших военно-политических деятелей этого периода (365—375 гг.) был спарапет Мушег Мамиконян. В исследовании Гранта Армена спарапет Мушег представлен как диктатор (причем, первый в истории Армении), рассчитывавший на союз с Византией. Это явное недоразумение. Единственный первоисточник по данному вопросу—«История Армении» Павстоса Бузанда (V в.)—не содержит никаких свидетельств о диктаторском режиме Мушега. Наоборот, данные Бузанда указывают на его большой патриотизм и приверженность к независимой государственности в Армении (Аршакидском царстве). Провизантийская ориентация спарапета Мушега являлась составной частью военно-политической программы борьбы против экспансии Ирана.